

**7-րդ դասարան**  
**Հայոց լեզու**

*Արքայական խոսքը մեր կմնա հավետ:  
Վահան Տերյան*

**Ուշադի՛ր կարդա տեքստը: Հիշի՛ր, որ բոլոր առաջադրանքները տեքստի  
հիման վրա ես կատարելու:**

Չափազանց այժմեական խնդիր է առերևույթ անմեղ թվացող մի արատ՝ ծաղրանքը, դիմացի մարդուն ձեռք առնելու մարմաջը: Որքա՛ն աներկբայորեն պարսավելի է այս ախտը: Մարդը ծանրորեն վիրավորվում է, երբ իր անունը, մարմնական որևէ թերությունը, խոսքը կամ շարժումները ծաղրում են աներևակայելիորեն տգեղ ձևով, հրեշավոր անտարբերությամբ:

Արժե հիշել Քրիստոսի ոսկե կանոնը. «Ուրիշների հետ վարվե՛ք այնպես, ինչպես կուզենայիք, որ ձեզ հետ վարվեին»: Մի՛ մոռացեք՝ եթե դուք չեք ուզում, որ ձեզ ծաղրեն, այդ դեպքում դուք ինչո՞ւ եք ուրիշին ծանակում և այպանում:

Մի՛ ցանեք վատություն, ձեր հոգիները մի՛ ապականեք ծաղրական խոսքով: Լեզուն մեր բարեկամն է, բայց նաև մեր ամենամեծ թշնամին է: Կարողանանք փակ դնել մեր լեզվին:

**1. Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրիր տրված բառերի հոմանիշները (3 միավոր, -0,5):**

- Մոլուցք-----
- Ժամանակակից-----
- գոց-----
- նախատելի-----
- հիվանդություն-----
- կեղտոտել-----

**2. Տեքստում գործածված են հոմանիշ բառերի զույգեր, գտի՛ր դրանք և դո՛ւրս գրիր (2 միավոր, -1):**

-----  
-----

**3. Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրիր հականիշ բառերի զույգերը (2 միավոր, -1):**

-----  
-----



